մնացած ժողովուրդների ընտանիքից: Եւ այդ՝ կնոջ դիրքն է, նրա ինքնուրոյնութիւնը եւ իրաւահաւասարութիւնը, նրա բարձր յարգը հայերի մէջ:

«Դրա մէջ է, իմ կարծիքով, ասում է Հաքստհաուզէն, հայերի կոչումը դէպի մարդկային աւելի բարձր մշակոյթ, ինչպէս եւ հայերի հոգեկան շատ բարձր կարողութիւնների մէջ է նրանց ապագան: Այդ է, որ հայերին դարձնում է միջնորդ եւ շաղկապող տարբ՝ Եւրոպայի ու Ասիայի միջեւ»:

Հայ ժողովուրդին, հակառակ նրա «մեծ մասի ցրուածութեանը ամբողջ Ասիայում եւ Եւրոպայի ու Աֆրիկայի մեծ(?) մասերում», հակառակ որ նրա «մի չնչի՛ն մասն է միայն ապրում իր հայրենիքում», բնաւ չէ պակսում սէրը դէպի ազգը, հայրենիքը, լեզուն, կրօնը եւ սովորութիւնները: Ընդհակառակը, այդ ամենի հետ հայերը կապուած են «ամենամեծ հաւատարմութեամբ» (Ա. 291). Նրանց յատուկ է «մի՝ արտակարգօրէն ուժեղ ազգային ներքին կապ» (Ա. 198):

Այդ տեսակէտից Հաքստհաուզէն վեր է հանում հայ եկեղեցու եւ յատկապէս Էջմիածնի մեծ նշանակութիւնը:

«Եթէ Ռուսաստանը ճիշդ է ըմբռնել իր պատմական առաքելութիւնը, ասում է Հաքստհաուզէն, հայերին պիտի տայ ա՛յն, որի ներքին մղումն ունին նրանք երկար ժամանակից ի վեր — մտաւոր կրթութիւն»:

Այդտեղ Հաքստհաուզէն մի զգուշացման խօսք է ուղղում Ռուսաստանին: Վերջինս չպիտի խառնուի հայերի կրթական-ներքին գործերին՝ վարելու, կառավարելու նպատակով: Հայերը պէտք չունին ռուսական կրթութեան, մանաւանդ այն կրթութեան, որ ռուս պաշտօնեաներին է տրւում: «Հայերը կարիք ունին մի կրթութեան, որ ներսից պիտի գայ եւ ազգային հիմերի վրայ կառուցուի»:

Դրա համար Հաքստհաուզէն անհրաժեշտ է համարում, որ նախ հոգեւորականները ձեռք բերեն պահանջուած կրթութիւնը: Դրան զուգընթաց առաջ պիտի տարուի եւ աշխարհիկ կրթութիւնը: Դրա համար նպատակայարմար է համարում Հաքստհաուզէն, որ 10–12 տարեկան հայ պատանիներ բերուին Գերմանիա, այդտեղի միջնակարգ դպրոցներում եւ համալսարաններում 10–12 տարի ուսում ու կրթութիւն ստանան, եւ՝ գիտութեան պաշար ամբարած՝ Հայաստան վերադառնան, ուսուցչութիւն անեն:

* * *

Այժմ տեսնենք, թէ Հայաստանից դուրս՝ Վրաստանում եւ Արեւել. Անդրկովկասում ապրող հայերը ընկերային տեսակէտից ի՞նչ պատկեր էին ներկայացնում:

Թիֆլիսի քաղքենի դասակարգը կամ այսպէս կոչուած «մոքալաքի»ները, տեսանք, գրեթէ բացառապէս հայեր էին, ինչպէս նաեւ «ազատ գիւղացիների» ճնշող մեծամասնութիւնը:

Պատկերը անչուշտ տարբեր չէ եղել նաեւ Վրաստանի միւս քաղաքներում: Ուրիշ խօսքով, «Վրաստանի քաղաքների վաճառական դասակարգը եւ մասամբ էլ արհեստաւորները հայեր են եղած: Դեռ այժմ էլ մի զգալի չափով պահուած է այդ պատկերը: Միւս կողմից, ռուրտերի մէջ եւս եղել են հայեր:

Թիֆլիսի մասին հետեւեալ մանրամասներն է հաղորդում Հաքստհաուզէն.

«Վրացիները մասամբ բաւական ստուարաթիւ ազնուականներ են, մասամբ՝ այդեպաններ, մի մասով էլ՝ մեծաթիւ աղքատներ ու մուրացիկներ: Թաթարները արհեստաւորներ են՝ դարբին, թամբագործ, ինչպէս նաեւ՝ երկրագործ: Գրեթէ բոլոր հայերը վաճառականներ են: Հայերը գործունեայ են, աշխատասէր եւ շահադէտ (speculative): Նրանք աստիճանաբար ձեռք են բերում ծոյլ, անգործունեայ վրացիների ողջ սեփականութիւնը գնելով, կապալով վերցնելով, գրաւառնելով, եւայլն: Դրա համար էլ նրանք ատուած են»:

Հաքստհաուզէն նկարագրում է իր ժամանակակից Թիֆլիսի համբարութիւնները կամ արհեստաւորական կազմակերպութիւնները (Ա. 111 շար.): Նա նրանց նմանեցնում է Գերմանիայի միջնադարեան համանման կազմակերպութիւններին: Վրաստանի համքարութիւնները Հաքստհաուզէն Պարսկաստանից ծագած է համարում:

«Ամէն մի արհեստաւորութիւն, ասում է նա, մինչեւ իսկ բեռնակիրները, օրավարձով աշխատողները, հաւ ծախողները կազմում են